DVV International

ARMSTAT

ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ՝ ԴԻ-ՎԻ-ՎԻ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԱԼԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԵՎ ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ (ԱՐՄՍՏԱՏ) ՄԻՋԵՎ

Արմստատի կողմից իրականացվող Աշխատուժի ընտրանքային հետազոտության շրջանակում մեծահասակների ոչ ֆորմալ կրթության վերաբերյալ տվյալների հավաքման և դրանց հենքով ձևավորված անվանազերծված տվյալների շտեմարանի՝ Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակին տրամադրման վերաբերյալ

Նախաբան

Հաշվի առնելով, որ Գերմանիայի ժողովրդական բարձրագույն դպրոցների միության միջազգային համագործակցության բաժնի՝ Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակը (այսուհետ՝ Դի-Վի-Վի Ինթերնեյշնալ)՝ որպես Հայաստանում մեծահասակների ուսումնառության և կրթության (ՄՈՒԿ) և ցկյանս ուսումնառության ներդրման և զարգացման առանցքային դերակատար, և Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեն (Արմստատ) հետապնդում են ընդհանուր նպատակ՝ կապված մեծահասակների ոչ ֆորմալ կրթության վերաբերյալ տվյալների հավաքման, մշակման ու տարածման հետ,

- **Հաշվի առնելով այն**, որ Դի-Վի-Վի Ինթերնեյշնալը շուրջ քսանհինգ տարի Գերմանիայի Դաշնային Հանրապետության Տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության (BMZ) ֆինանսական աջակցությամբ իրականացնում է ՀՀ-ում ՄՈՒԿ ջատագովության և հանրահռչակման նախաձեռնություններ ու ծրագրեր, այդ թվում՝ ՄՈՒԿ տվյալների հավաքում՝ հարցումների և հետազոտությունների միջոցով,

- **Հաշվի առնելով այն**, որ 2020-2021թթ. Դի-Վի-Վի Ինթերնեյշնալը Հայաստանում առաջին անգամ իրականացրել է «Մեծահասակների կրթության հետազոտությունը» և հինգ տարի անց կարևորվում է տվյալների շարունակական հավաքումը՝ ՄՈՒԿ բարելավված ազգային վիճակագրություն ունենալու և միջազգային զեկույցներում (օր՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի ՄՈՒԿ-ի վերաբերյալ համաշխարհային զեկույց (GRALE)) վստահելի տվյալներ ներառելու նպատակով,

- **Հաշվի առնելով այն**, որ ՄՈՒԿ վիճակագրության վարման և փաստահեն քաղաքականության կայուն և արդյունավետ համակարգ ձևավորելու համար նպատակահարմար է համագործակցել ՀՀ-ում պաշտոնական վիճակագրության ոլորտի համար պատասխանատու պետական մարմնի՝ Արմստատի հետ,

- **Հաշվի առնելով այն,** որ Արմստատը պարբերաբար իրականացնում է ընտրանքային հետազոտություններ, որոնցից մասնավորապես Աշխատուժի ընտրանքային հետազոտությունը ներկայացուցչական է ՀՀ-ի համար և որոշ բնութագրերով առնչություն ունի նաև Մեծահասակների կրթության հետազոտության հետ,

Հիմք ընդունելով վերոգրյալը և ելնելով փոխադարձ վստահությունից և համագործակցության ոգուց՝ Արմստատը և Դի-Վի-Վի Ինթերնեյշնալը (այսուհետ՝ Կողմեր) սույնով համաձայնում են հետևյալի շուրջ.

1. Փոխըմբռնման հուշագրի (այսուհետ՝ Հուշագիր) առարկան 2026թ. Արմստատի կողմից իրականացվող Աշխատուժի ընտրանքային հետազոտության (ԱԸՀ) մեջ Մեծահասակների ոչ ֆորմալ (non-formal) կրթությանն առնչվող որոշ հարցերի ներառումն է՝ համապատասխան մեթոդաբանական, կազմակերպչական և ֆինանսական փոխհամաձայնեցված մոտեցումներով, այդ թվում՝

1.1. Հուշագրի անբաժանելի մաս կազմող Հավելված 1-ում ներկայացված թվով 8 հարցերի ներառում ԱԸՀ հարցաթերթում և նշվածին վերաբերող տվյալների հավաքում 2026թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսների ընթացքում ԱԸՀ ընտրանքում ներառված 2640 տնային տնտեսություններից: Հարցման թիրախային խումբ են տնային տնտեսության 18-69 տարիքային խմբի անդամները:

1.2. 2026 թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին վերոնշյալ 8 հարցերի վերաբերյալ տվյալների հավաքումը դիտարկել որպես պիլոտային փուլ՝ նշված հարցերն ամբողջական ծավալով կամ որոշակի փոփոխություններով ԱԸՀ հարցաթերթում հետագա տարիներին ներառելու նպատակով՝ որպես ՄՈՒԿ վիճակագրության վարման համար տեղեկատվական հնարավոր աղբյուր: Ընդ որում պիլոտային փուլի ավարտից հետո ՄՈՒԿ վիճակագրության շարունակական վարումը պարտադիր բնույթ չի կրելու, այլ բացառապես պայմանավորված է նշվածի շուրջ Արմստատի հայեցողությամբ՝ կախված հետագա կարիքներից, առաջնահերթություններից և հնարավորություններից:

2. Դի-Վի-Վի Ինթերնեյշնալը համաձայնում է.

2.1. Արմստատի հետ համագործակցությամբ վերջնականացնել ԱԸՀ հարցաթերթում Հավելված 1-ով նախատեսվող թվով 8 հարցերի ձևակերպումները:

2.2. Մինչև 5,000,000 դրամ նախատեսել Հուշագրի շրջանակում աշխատանքների իրականացման համար, որից՝ 4,400,000 ՀՀ դրամն ուղղել ԱԸՀ հետազոտական թիմի փոխհատուցմանը՝ ԱԸՀ հարցաթերթում լրացուցիչ հարցերի ներառման արդյունքում անձնակազմի լրացուցիչ ծանրաբեռնվածության ավելացման դիմաց, իսկ 600,000 դրամը՝

Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի կողմից ներգրավված հետազոտության համակարգողի վարձատրության, ինչպես նաև անձնակազմի վերապատրաստման նպատակով ծախսերի իրականացմանը:

2.3. 2.2 կետում նշված փոխհատուցման նպատակով ԱԸՀ թիմում ներառված աշխատակիցների հետ կնքել ծառայությունների մատուցման պայմանագրեր՝ Հուշագրի անբաժանելի մասը կազմող Հավելված 2-ով նախատեսվող փոխհատուցման չափով: Ծառայությունների մատուցման պայմանագրով նախատեսված փոխհատուցումն իրականացնել ոչ ուշ քան 2026 թ. դեկտեմբերի 20-ը՝ ըստ կատարված աշխատանքները հավաստող ծառայությունների մատուցման ակտի:

2.4. Աջակցել ԱԸՀ հարցաթերթում սույն Հուշագրի շրջանակում նախատեսվող նոր հարցերին առնչվող մեթոդաբանական պարզաբանումներին միտված ԱԸՀ անձնակազմի վերապատրաստման դասընթացի կազմակերպմանը:

2.5. Հուշագրով նախատեսվող միջոցառումների հետ կապված բոլոր հնարավոր հարցերի և խնդիրների վերաբերյալ տեղեկացնել Արմստատի ԱԸՀ թիմին և աջակցել դրանց լուծումներ տալու գործընթացին:

2.6. Սույն Հուշագրի շրջանակում գործել Պաշտոնական վիճակագրության մասին օրենքով սահմանված սահմանափակումների, իր և Արմստատի կանոնադրությամբ, պրոֆեսիոնալ էթիկայի կանոններով, այլ ընթացակարգերով սահմանված նորմերին և սկզբունքներին համապատասխան:

3. Արմստատը կարող է.

3.1. Անհրաժեշտ փոփոխություններ իրականացնել ԱԸՀ հարցաթերթում՝ ԱԸՀ շրջանակում 2026թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ժամանակահատվածի վերաբերյալ սույն Հուշագրի 1.1 կետով նախատեսված տվյալները հավաքելու նպատակով: Հուշագրի 1.2 կետով նկարագրված որոշման կայացման արդյունքում 2027թ.-ից սկսած հավաքել նախատեսվելիք տվյալները:

3.2. Կազմակերպել և իրականացնել 2026թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին ԱԸՀ ընտրանքում ներառված թվով 2640 տնային տնտեսություններից ԱԸՀ հարցաթերթում ներառված լրացուցիչ հարցերի վերաբերյալ տվյալների հավաքումը (ներառյալ՝ տարբեր պատճառներով ընտրանքում ընդգրկված հարցվողների չպատասխանելիության դեպքերը):

3.3. Աջակցել Դի-Վի-Վի Ինթերնեյշնալին՝ Հավելված 2-ում թվարկված ԱԸՀ թիմի աշխատակիցների հետ պայմանագրերի ստորագրման գործընթացին, այդ թվում՝ անհրաժեշտ փաստաթղթերի տրամադրմանը:

3.4. Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հետ համագործակցությամբ կազմակերպել և իրականացնել ԱԸՀ հարցաթերթում ներառված նոր հարցերին առնչվող փոփոխությունների վերաբերյալ ԱԸՀ անձնակազմի վերապատրաստումը:

3.5. Սույն Հուշագրով նախատեսվող բոլոր միջոցառումների շուրջ հնարավոր հարցերի և խնդիրների լուծման ուղղությամբ ապահովել համագործակցություն Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հետ:

3.6. Սույն Հուշագրի շրջանակում նախատեսվող տվյալների հավաքման ավարտին հաջորդող երեք ամսվա ընթացքում Դի-Վի-Վի Ինթերնեյշնալին տրամադրել հարցման նախնական արդյունքները, իսկ 2027 թ. չորրորդ եռամսյակում՝ 2026 թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին վերաբերող տվյալների համապարփակ, անվանազերծված տվյալների բազան՝ Պաշտոնական վիճակագրության մասին օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դրույթներին համապատասխան:

4. Պարտավորությունների բացակայությունը.

Սույն Հուշագիրը հանդիսանում է միայն Կողմերի փոխադարձ մտադրությունների և բարի կամքի դրսևորում: Այն չի պարունակում պարտադիր կանոններ, կողմերից որևէ մեկի համար չի առաջացնում իրավական կամ ֆինանսական պարտավորություններ և չի կարող հիմք հանդիսանալ դատական կամ այլ իրավական պահանջներ ներկայացնելու համար:

5. Փոփոխությունների և լրացումների կատարումը.

Սույն Հուշագրի դրույթները կարող են փոփոխվել կամ լրացվել բացառապես Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ: Ցանկացած այդպիսի փոփոխություն կամ լրացում ձևակերպվում է առանձին համաձայնագրի միջոցով, որը ստորագրվում է Կողմերի կողմից, հանդիսանում է սույն Հուշագրի անբաժանելի մասը և ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

6. Վեճերի լուծումը.

Սույն Հուշագրի մեկնաբանման կամ կիրառման ընթացում առաջացող բոլոր տարաձայնությունները Կողմերը կլուծեն բանակցությունների և խորհրդակցությունների միջոցով: Համաձայնության չգալու դեպքում Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի միակողմանիորեն դադարեցնել հուշագրի գործողությունը՝ առանց որևէ պատասխանատվության:

7. Հուշագրի ստորագրման ամսաթիվը և գործողության ժամկետը.

Հուշագիրը ստորագրվել է 2026 թվականի սեպտեմբերի «28»-ին ք. Երևանում, ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 2027թ. դեկտեմբեր:

8. Եզրափակիչ դրույթներ.

Սույն Հուշագիրը չի հանդիսանում միջազգային պայմանագիր, կազմված է երկու բնօրինակից՝ հայերենով և համաձայնեցված անգլերենով: Յուրաքանչյուր Կողմի մոտ պահվում է Հուշագրի մեկ օրինակ, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ:

ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակ	ՀՀ վիճակագրական կոմիտե
ՀՀ ք. Երևան, 0025, Չարենցի փող., 1	Հանրապետության պող. Կառավարական 3 շենք, 0010, Երևան
Տնօրեն՝	Նախագահ՝
Էսթեր Հակոբյան	Ստեփան Մնացականյան